ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 285 – Ա

«ԱՆԳԵՂԱԿՈԹԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԿԱՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով «Անգեղակոթի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Կ. Գալստյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. «Անգեղակոթի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Կարեն Գալստյանին 2026 թվականի հունիսի 16-ին տրամադրել 1օր չվճարվող արձակուրդ:

2. Վարչատնտեսական մասի համակարգողի արձակուրդում գտնվելու ընթացքում նրա պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության տնօրեն Անահիտ Պետրոսյանին:

3. Կարեն Գալստյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի հունիսի 17-ից:

2026-06-15 17:21:39 GMT+4
Հավաստագրված է ԷԿԵՍԳ-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետ Ռ. Ղուկասյան

2026թ. հունիսի 15
Ք. Կապան